

**ԱՐՓԵՆԻԿ ԴԱԶԱՐՈՍՑԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու**

ԾՈՂԱԳԱՎԱՆՔԻ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ

Ծողագա վաճքը Գեղարքունիքի գրչության հին կենտրոններից է: Վաճական համալիրի ավերակները գտնվում են Գեղարքունիքի մարզի Մարտունու շրջանի Ջորագյուղի արևմտյան մասում, բլրի վրա: Հնում վաճքը և գյուղը նույնանում են եղել: Ծողագա բնակավայրը հիշատակվում է 9-րդ դարի վերջին և 10-րդ դարի սկզբին: Ասողիկ պատմիչի վկայությամբ, այն հիմնվել է Ծողագա վաճքի հետ միասին¹: Գյուղի հնության վկան է նաև նրա արևմտյան կողմի լեռնագագաթի վաղ միջնադարյան ամրոցը:

Վաճքը գործել է մինչև 17-րդ դարավերջը: Այժմ վաճական համալիրից մնացել է ավերակ Պողոս-Պետրոս եկեղեցին²: Այն եռախորան է՝ չորս ավանդատնով, որը Սևանի ավագանում նմանատիպ կառուցվերից հնագործներից է: Եկեղեցին կառուցվել է Գեղամա հիմքարուն իշխան Վասակ Գաբրունի տիկնոց՝ Մարիամ Բագրատունու միջոցներով: Գեղարքունիքի տիրութիւն այն կառուցել է Սևանավանքի Ս. Աստվածածին և Ս. Առաքելոց եկեղեցիների շինությունից հետո (871 թ.): «Ծինէ Մարիամ զՍևանայ եկեղեցին և յետոյ զԾողուագային», - վկայում է Օրբելյան տաճ պատմիչը:

Ըստ Օրբելյանի, Պողոս-Պետրոս եկեղեցին մեկն էր այն 40 եկեղեցիներից, որ ուստեղ էր կառուցել Մարիամ իշխանութիւն՝ իր ամուսնու՝ վաղամետիկ իշխան Վասակ Գաբրունի հիշատակին: Բացի դրանից, նորակառուց եկեղեցուն իշխանութիւն նվիրում է հագարացիներից 60 հազար դրամով գնած Ծողագա գյուղը՝ միաժամանակ ազատելով գյուղացիներին «ամենայն հարկաց»³:

Պողոս-Պետրոս եկեղեցում Սյունյաց տիրութու միջոցներով կարգվում է միաբանություն՝ «կրօնատրաց դասս բազմահոլլ քահանայից», թողմնելով այս ամենը հաստատող «արձանագրություն մի»: Այժմ այդ վիմագրից լոկ բնկորներ են մնացել կիսավեր եկեղեցու վրա⁴: Նույն այս պատճառով վատ է պահպանվել հիմնարկեքի արձանագրությունը, չկա տարեթիվը: Ուսումնասիրողները գտնում են, որ տաճարի շինարարությունը պետք է որ ն-դած լինի 877-886 թվականների ընթացքում, ավելի հնարավոր է, սակայն, 885 թվականը՝ Աշոտ թագավորի օծման տարին⁵:

¹ Ստ. Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, Սամկո Պետերորուգ, 1885, էջ 259: Այսուհետև՝ «Պատմութիւն տիեզերական»:

² Դիվան հայ վիմագրության, ար. 4, կազմ՝ Ս. Բարիսուտարյան, Երևան, 1973, էջ 241: Այսուհետև՝ Դիվան հայ վիմագրության, ար. 4:

³ Նույն տեղում, էջ 241:

⁴ Ստ. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 174-175: Այսուհետև՝ «Պատմութիւն նահանգին»:

⁵ Ս. Մնացականյան, Հայ ճարտարապետության Սյունիքի դպրոցը, Երևան, 1960, էջ 43: Ա. Մանուչարյան, Բնանություն Հայաստանի 4-11-րդ դարերի շինարարական վկայագրերի, Երևան, 1977, էջ 117:

Արդանագրությունից հմանում ենք նաև, որ տիրութիւն 30 հազար դարձեանով գնում է Մազագ գավառի Գմեր գույղը ու Ավիրում միաբանությանը:

Եկեղեցու նավակատիցին մասնակցում են Գևորգ Կաթողիկոսը, Սյունիաց Հովհաննես եպիսկոպոսը, Գագիկ Սյունյաց իշխանը, Վասակի եղբայր Հրահատը և «այլ բազում ազատաց և իշխանաց»: Այսպես «Բաստատէ արձան անջինչ լիշտառակի»⁶: Կասկածից վեր է, որ Մարիամ Բագրատունի իշխանութիւն իր ողջ կյանքի ընթացքում նյութապես օժանդակել է միաբանությանն, ու այն ծաղկուն հոգուր և մշակութային կյանքով է ապրել՝ թեև այդ մասին մենք գրավոր տեղեկություններ չունենք: Եվ պատահական չէ, որ իշխանութու մասից հետո նրա մարմինը ամփոփվել է Ծողագա վանքում «ի քնարանի իրում, մերձ ի ձեռակերտ եկեղեցի իր»⁷: Տարիներ անց, Սյունյաց իշխանների միջոցներով, Մարիամի շինուական կանգնեցվում է փոքրիկ եկեղեցի: Ուսումնախողների կարծիքով, այդ դամբարան-եկեղեցին գտնվել է Պողոս-Պետրոս եկեղեցուց արևմտուք⁸:

Այստեղ ընդորինակված ձեռագրերում միաբանության մեջ հիշատակվում են Ս. Աթանազինե, Ծողակաթ, Ծիրանավոր եկեղեցիները: «Ի գեղմ Ծաղաքա, առ դրան Սուրբ Աթանակինէ, Սուրբ Ծողակաթի և Սուրբ Ծիրանատրիս» իր ձեռագիրն է ավարտում Հայութու երեցը⁹:

10-րդ դարում Սարգիս Սևանցի վարդապետը մամկահասակ Գագիկ թագավորից ստանում է Ծողագավաճքի վանահայություննը. «Տայ Ամայ (Գագիկ թագավորը - Ա. Ղ.) տեղի և վասն քնակութեան զվանսն, որ յաղագն ծագման իրից լուսոյ աստուածայնոյ Ծողագայ ամուածի»¹⁰: Տարիներ անց, մինչև կաթողիկոս ընտրվելը, Սարգիսը դառնում է Սևանավաճքի վանահայը¹¹:

Ծողագավաճքը հիմնադրման օրից եղել է Գեղարքունիքի Հայկազուն իշխանների Բովանակուրության մերքը: Նրանք միաբանության մշակութային զարգացման համար ստեղծել են բոլոր անրաժեշտ պայմանները: Այստեղ, ինչպես հայոց մյուս վանքերում, գրվել, խմբագրվել, նկարագրվել ու կազմվել են ձեռագիրեր. ձեռագիր ընդորինակելը դարձել էր միաբանության հոգուրականների մի մասի գործունեության հիմնական քնագավառը: Ցավոք, այս գրչության կենտրոնից մեզ հասել է միայն 17-րդ դարում Հայրապետ գրչի ձեռքով գրված չորս ձեռագիր:

Հայրապետ երեցի ընդորինակած առաջին ձեռագիրն Ավետարան է, որ նա սկսել է 1668 թ. «Գրեցաւ ձեռամբ սուտանուն Հայրապետ իրիցու, ի թվին ՌՕԺԸ (1668) ամի», - տեղեկացնում է գրիչը Մարկոսի Ավետարանի վերջում¹²: Հաջորդ՝ Ղուկասի և Հովհաննեսի Ավետարանները գրիչը սկսել է ընդորինակել երկու տարի անց. «ԹՎԻՆ ՌՇԻ (1671) ամի մարտի ԺԵ (15)»¹³: Գեղեցկագիր, վարժ ու արագագիր է Հայրապետը: Նա ընդամենը մեկ

⁶ Ստ. Օրբելյան, Պատմութիւն Ամանգին, էջ 175:

⁷ Հովհաննես Դրախմանակերտոցի, Պատմութիւն Բայոց, Թիֆլիս, 1912, էջ 230:

⁸ Ստ. Մանացանյան, Հայկական ճարտարապետություն, էջ 44:

⁹ Երևանի Մատենադարան, ձեռ. 3973, էջ 261թ:

¹⁰ Ստ. Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, էջ 259:

¹¹ Նոյն տեղում:

¹² Մատենադարան, ձեռ. 3973, էջ 126թ:

¹³ Նոյն տեղում, էջ 205ա:

ամիս երկու օրում ավարտում է Հովհաննու Ավետարանը. «Ի թվականին Հայոց ՌՇի (1671), յապրիլի ԺԵ (17)»^{14:}

Զեռագիր օրինակելը Հայրապետի գործումնության հիմնական բնագավառն էր, ուստի սովորություն է ունեցել ընդորինակելիս Մարկոսի և Մատթեոսի Ավետարանների մի քանի օրինակ ընդորինակել, մանավանդ, երբ իր տրամադրության տակ ունեցել է ընտիր գաղափար օրինակ: Ասենք, ընդորինակելիս միանգամից երեքական օրինակ Մատթեոսի և Մարկոսի Ավետարաններ է ավարտել, մյուս անգամ՝ Ղուկասի և Հովհաննու Ավետարանների երեքական օրինակ:

Զեռագիրը գրված է թողեի վրա, բոլորգրով, ունի գլխացանկ, նախադրություն, համարրար, նաև՝ ցրվացանկ: Նկարազարդ է չորս ավետարանիչների պատկերներով, ունի և լուսանցազարդեր, գլխազարդեր: Զեռագիրը ծաղկողն ինքը գրիշն է. ընդորինակելիս Հայրապետ երեցը գլխազարդերը և բնագրի ընդորինակությունը միաժամանակ չի արել, ինչպես սովորաբար արվում էր: Նա գլխազարդերի տեղը բաց է թողել և էջի կողմնային ու միջին լուսանցքներում մանրատառ շղագրով գրել է գլխազարդի տառը՝ հետագայում զարդագրելու և գլխագրելու համար:

Այս ձեր նպատակահարմար է նաև այն դեպքում, երբ գրիշը ծաղկող չէ և ընդորինակածը ծաղկողին է տալիս զարդագրելու առանց գաղափար օրինակի: Հայրապետ երեցը միաժամանակ նաև ծաղկող էր ու ինքն էր զարդագրում (դարձյալ առանց գաղափար օրինակից օգտվելու): Ավետարանի ընդորինակությունն ավարտելուց հետո՝ կազմելիս, կտրվում էին թերթերի կողմնային լուսանցքները, կողմնային եզրերը, որոնց հետ նաև՝ մանրատառերը: Զեռագրում նկատվում է նաև թերթերի մկրատումներ, որոնց պատճառը կա՞մ միևնույն թերթի կրկին գրած և կա՞մ էլ էջի սխալագիր լինելը է:

Մատյանը Հայրապետ երեցն ավարտել է «Ի թվականին Հայոց ՌՇի (1671), ի ապրիլի ԺԵ (17), ի հայրապետութեան տեառն թակորբա և ի թագաւորութեանն կարմրագլուխ ազգից Պարսից, որ անուանի Ղզըլպաշ Շամ Սիլովմանն Վերաձայնի: Գրեցաւ ի գաւառին Գեղամա, ի գեղողն որ կոչի Շաղլաքա, առ դրան Սուրբ Աթանակիմէն և Սուրբ Շօղակաթի, և Սուրբ Ծիրանատորիս և այլոց սրբոց, որ աստ կան հաւաքեալ»^{15:} Ավետարանը իլիկավանեցի տաճուտեր Հովհաննեսը սուացել է ի հիշատակ իր ծնողների՝ հորը՝ Պետրոսի, մոռը՝ Մարգարիտի, և կենակցի՝ Սիրամարգի, որ Ավիրել իլիկավանքի «Սուրբ եկեղեցուն»^{16:}

Հայրապետ գրիշը նորից երկու տարվա ընթացքում ավարտել է մի Ավետարան, որի ընդորինակումը սկսել է 1675 թ.: Առաջին երկու Ավետարանները (Մատթեոսի և Մարկոսի)՝ «Ի թվին ՌՇի Դ (1675), ս[ե]պտեմբերի Է (7)»^{17:}, իսկ Ղուկասի և Հովհաննեսի Ավետարանները՝ «Ի թվականին Հայոց հազար ՇԻ և Զ (1677) ամի և մայիսի ԻՂ (28)»^{18:}

¹⁴ Նույն տեղում, էջ 261թ-262ա:

¹⁵ Նույն տեղում, էջ 262ա:

¹⁶ Նույն տեղում, էջ 263ա: 1783 թ. ձեռագիրը դարձել է կարմեցի Ավետիցի սեփականությունը, և այն նվիրել է Հովհաննավանքին (127ա):

¹⁷ Մատթեադարան, ձեռ. 335, էջ 123թ:

¹⁸ Նույն տեղում, էջ 262ա:

Ինչպես նրանում է ձեռագրից, գրիչը արագագիր է, որը շտապելու կամ «անբարի ժամանակի» թետևանք է, ինչպես համայն հիշում են իրենք: Դրա համար էլ երբեմն թույլ է տվել սխալներ, անճշտություններ, ջնջել ու նորից է գրել, երբեմն էլ ամբողջական նախադասություններ է սխալ գրել ու մաքրել, երբեմն միևնույն էշը երկու անգամ է գրել, կամ սխալ ները մի էջում այնքան շատ են եղել, որ մկրատել է:

Ինչպես նախորդ, այնպես էլ այս ձեռագրի ծաղկող Հայրապետ գրիշն է: Ձեռագիրը ունի չորս ավետարամիշների պատկերները, խորաններ, լուսանցազարդեր, զարդագիր գլխագրեր: Այստեղ ևս էշի գլխազարդի տառը մանրագիր գրվել է երկու կողմնային լուսանցքներում, այնպես, որ կազմելուց հետո չի նկատվել: Ձեռագրի ընդօրինակման այս սկզբունքը նկատվում է նաև ավելի ուշ, այլ գրիշների արած ընդօրինակություններում:

Ինչպես տեսանք, Հայրապետ գրչի համար ստվորույթ է եղել նախօրդը Մատթեոսի և Մարիոսի մի քանի Ավետարամներ արտագրել՝ թետագյում ավարտուն դարձնելու համար: Ավետարամը գրիչը նորից ավարտել է երկու տարում. «Ի դառն ժամանակի, ի գաւառիս Գեղամա, ի գեղոս, որ կոչի Շաղվաքա, ի դրուն Սուրբ Աթանհայի և Սուրբ Ծողակաթի, և Սուրբ Պետրոսի և Սուրբ Շիրանաւորիս»¹⁹:

Ձեռագիրը դարձել է Մկուտիչի և ճրա Կնոց՝ Թեազենի սեփականությունը: Ստացողներն այն նվիրել են ի հիշատակ իրենց ծնողների՝ Հատի և Վարդիսաթունի Կեչառիսի Սուրբ Լուսավորիչ եկեղեցուն, որի սպասավոր Սարգսի կրոնավորը երդվել է լավ պահպանել Ավետարամը, «ամրութեամբ պահէ թէ ջրէ և թէ կրակէ և ամենայն պատահմանէ պահէ»²⁰:

Ծողագա վաճքում է ընդօրինակված Հայրապետ գրչի երկու ձեռագիր ևս: Դրանք խորհրդատեսոր են, որոնցից մեկը ընդօրինակվել է 1676 թ.: Այն նկարազարդ է, ունի լուսանցազարդեր և գլխազարդեր: Գրված է մագաղաթի վրա, բոլորգրով, երկայն: Ավարտվում է այս հիշատակարանով.

Հայկական թվականի հազար հարիւր
Քսան և հինգ երրորդի, (1676 թ.) մարտ ամսոյ, օրն մէկի...²¹

Չափածո այս հիշատակարանից իմանում ենք, որ գրիչը Սյունիաց աշխարհի Բնումիք գյուղից է և իր ամբողջ կյանքն անց է կացրել Ծողագա վաճքում:

Որ եմ երկրէն ի Սունացի,
Զգեղոցն կոչեմ Բնումեցի:
Վայ Ռ (1000) թերան ինձ դարիայի:
Կացարան իմ Գեղամա,

¹⁹ Նույն տեղում, էջ 262ր:

²⁰ Նույն տեղում, էջ 263ա: Ձեռագիրը թետագյում, 1723 թ., գերի է սնկնում և նոյն թվականին փրկվում Հարությունի ձեռքով ու վերաբարձրվում վաճ:

²¹ Մատթեոսարամ, ձեռ. 7796, էջ 23ա. Ավգրից թերի է:

Գեղս, որ կոչի Ծաղվաքայի,
Ընդ հոգածնեաւ Սուրբ Արթանագինա
Եւ Սուրբ Պետրոսի, Ծողակաթի²²:

Հայրապետ գրչի մասին կենսագրական տեղեկությունները միայն այս չափածո հիշատակարանների մեջ եղածն են: Ձեռագրի մանրանկարները ևս Բնումնեցունն են:

Երկրորդ Խորհրդատետրը Հայրապետ երեցն ընդօրինակել է Մարտիրոսի համար: Գրված է բոլորգրով, կամարներով ավարտվող պատճերի մեջ: Ամեն գլուխ սկավում է զարդարով, որի դիմաց բուսական լուսանցազարդեր են և քերովքները: Ձեռագիրն ավարտվում է նույն չափածո հիշատակարանով, ինչ-որ նախորդ Խորհրդատետրում եղածը, փոխված է միայն ընդօրինակության ավարտի թվականը.

Հազար հարիւր քսան և ութենրորդի (1679 թ.)

Մարտ ամսոյ քսան և վեցի²³:

Ստացող Մարտիրոսը «սուրբ խորհրդի տետրակս» ստացել է ի հիշատակ իր և իր կենակից Նազլուխանի, նաև իր ծնողների՝ Սարգի և Մարեանի, «և առ ի Քրիստոս փոխեցեալ» որդիների՝ Անանիեի, Թաթոսի և Անտոնի²⁴:

Գրիչ և ծաղկող Հայրապետ Բնումնեցի երեցի ընդօրինակած ձեռագրեղից մեզ հասած մատյանները թեև փոքրաթիվ (չորսն) են, սակայն նրա գրչական գործունեության առնը-վազն տասը տարվա վկայությունն են: Նա արագագիր էր, որի ապացուցներն են նաև ձեռագիր ընդօրինակելու ուրույն եղանակները: Որպեսզի ժամանակը լավ օգտագործի, նախօրոք բաց է թողել գլխազարդերի ու զարդագրերի տեղերը յուրաքանչյուր էջում՝ լուսանցքներում մանրատառ նշելով այդ գլխազարդին համապատասխանող տառը: Դրանք լուացրել է ձեռագիրն ավարտելուց հետո, այլ գովզի թանաքռով ու գրչով: Նույն նպատակին է ծառայել նաև ամեն մի թերթից մի քանի օրինակ միաժամանակ արտագրելը, որով խմայվում էր գրակալին գաղափար օրինակն ամրացնելու ու փոխելու վրա ծախսվող ժամանակը:

Հայրապետ Բնումնեցին, որը և՛ գրիչ էր, և՛ ծաղկող, այն է՛ բավական հմուտ, հավատացած էր, որ իր ընդօրինակություններն անպայման ստացողներ կունենան, դրա համար էլ մի տարրում մի քանի Ավետարան էր ընդօրինակում միաժամանակ: Այսպիսի վաստակաշտ արագագիր ու վարծ գրչից ենթարկվում է, որ բավական շատ ձեռագրեր պետք է լինեն, և մեզ հասած չորս ձեռագիրն անշուշտ շատ քիչ է, որը բացատրվում է հայ ձեռագրական աշխարհի անթվարկելի կորուստներով:

²² Նոյն տեղում, էջ 23ր: Ձեռագիրը պատկանել է Թիֆլիսի Հայ ազգագրական ըմկերությանը (1ա):

²³ Մատենադարան, ձեռ. 6408, էջ 23ր:

²⁴ Նոյն տեղում, էջ 24ա: